

Pub#F121.10 Armenian – March, 2020

\*Այս հրապարակման թարմացումը կատարվել է 2020թ. մարտի 20-ին: COVID-19 վարակի մասին մանրամասն տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.disabilityrightsca.org/post/announcement-coronavirus-and-how-disability-rights-california-can-help-you> և <https://www.covid19.ca.gov/healthcare/>

## **COVID-19 (կորոնավիրուս)՝ ինչպես ձեռք բերել դեղամիջոցները, եթե ստանում եք Medi-Cal**

---

Այս նյութը նրանց համար է, ովքեր ընդագրկված են Medi-Cal ծրագրում և չգիտեն, թե ինչպես են ստանալու իրենց դեղամիջոցները:

Այս տեղեկատվական թերթիկը կտեղեկացնի ձեզ հետևյալի մասին.

- Ինչպե՞ս ստանալ դեղամիջոցները
- Դեղամիջոցների պաշարի կուտակում
- Այլ հարցեր

### Դեղամիջոցների ստացում

Դուք կարող եք ստանալ ձեր դեղամիջոցները առաքման միջոցով:

Գործում են դեղամիջոցների առաքման առցանց ծառայություններ:

Կապվեք ձեր առողջության ապահովագրության ծրագրի հետ, որպեսզի

տեղեկանաք, թե ինչպես կարող եք ստանալ ձեր դեղամիջոցներն առաքման միջոցով:

Ձեր կառավարվող բուժօգնության ծրագիրը կարող եք գտնել այստեղ՝ <https://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MMCDHealthPlanDir.aspx>

Եթե ունեք ծառայությունների դիմաց վճարող Medi-Cal, պարզեք, թե որ տեղական դեղատներն են ընդունում Medi-Cal և կատարում փոստով առաքում:

Եթե պետք է ինքնուրույն վերցնեք ձեր դեղամիջոցները, գտեք այնպիսի դեղատներ, որոնք ունեն մեքենայից դուրս չգալու հնարավորությամբ սպասարկող պատուհաններ կամ մայթեզրի մոտ սպասարկելու ծառայություն: Կարող եք խնդրել ձեր ընտանիքի որևէ անդամին, ընկերոջը կամ հարևանին օգնել ձեզ այս հարցում:

### Դեղամիջոցների պաշարի կուտակում

Medi-Cal-ը դեղատներին թույլ է տալիս շատ դեղամիջոցների համար տրամադրել մինչև 100 օրվա պաշար:<sup>1</sup> Նաև, եթե դեղամիջոցի առաջին նշանակման օրվանից անցել է օրերի 75%-ը, շատ դեղամիջոցների համար կարող եք լրացուցիչ պաշար վերցնել:<sup>2</sup> Կարող եք ապահովել ձեզ դեղամիջոցների այն քանակով, որը կբավականացնի մի քանի ամսվա համար:

Դեղատները պետք է տրամադրեն դեղամիջոցներ արտակարգ իրավիճակում: Դեղատները կարող են արտակարգ նշանակության դեղամիջոցները տրամադրել COVID-19 վիրուսով վարակված հիվանդներին: Մանրամասն տեղեկություններն այստեղ՝ [http://files.medical.ca.gov/pubsdoco/newsroom/newsroom\\_30366.asp](http://files.medical.ca.gov/pubsdoco/newsroom/newsroom_30366.asp)

### Այլ հարցեր

---

<sup>1</sup> <https://www.dhcs.ca.gov/Documents/COVID-19/Managed-Care-COVID-19-Memo-031620.pdf>

<sup>2</sup> <https://www.dhcs.ca.gov/Documents/COVID-19/Managed-Care-COVID-19-Memo-031620.pdf>

Medi-Cal-ի դեղորայքային նպաստների մասին ընդհանուր հարցերի  
դեպքում այցելեք՝  
<https://www.dhcs.ca.gov/provgovpart/pharmacy/Pages/PharmFAQ.aspx>

Դեղամիջոցների հետ կապված լրացուցիչ տեղեկատվության համար  
զանգահարեք Medi-Cal-ի անդամների և բուժհաստատությունների թեժ  
գծին (800) 541-5555 հեռախոսահամարով:

Եթե ունեք հարց ձեր օրինական իրավունքների մասին, զանգահարեք  
Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների  
պաշտպանության կազմակերպության ընդունարան (800) 776-5746  
հեռախոսահամարով: